Հավելված N 2
2024 թվականի հունվարի 22-ին կնքված
1032-11003/24-ԵՑ-1 պայմանագրի

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 5

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի տրամադրում և սոցիալապես անապահով անձանց սննդի կազմակերպում» |
| Դրամաշնորհի N | Լոտ 1. Երևան - 1 ցերեկային կենտրոն |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2024-31.12.2024թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.01.2024-31.12.2024թթ |
| Ներկայացման օր | 10.01.2024թ. |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Մարգարիտ Հովհաննիսյան<br>սոցիալ-առողջապահական ծառայությունները համակարգող |

2. Բովանդակային հաշվետվություն

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.
- սոցիալ-հոգեբանական օգնության և իրավաբանական խորհրդատվության տրամադրում,
- ազատ ժամանցի, խմբակների, զբաղվածության, մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում,
- աշխատանքային/արտթերապիայի կազմակերպում,
- կենտրոնում սննդի կազմակերպում,
- բաղնիքի ծառայության տրամադրում,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- Սոցիալ-հոգեբանական օգնության տրամադրման շրջանակներում սոցիալական աշխատողը անհատական և խմբային աշխատանքների միջոցով հաշվետու ժամանակահատվածում աջակցություն է տրամադրել 55 շահառուի, իրականացվել է շահառուների կարիքների գնահատում և վերագնահատում: Հաշվետու ժամանակահատվածում շահառուների հիմնախնդիրների լուծման նպատակով իրականցվել է 13 դեպքի վարում, 92 ուղղորդում, միջամտություն/միջնորդում այլ կառույցներ:
  Իրավաբանական խորհրդատվության շրջանակներում շահառուներին շարունակական տեղեկատվություն է տրամադրվել իրենց իրավունքների վերաբերյալ:
- Հաշվետու ժամանակահատվածում աշխատանքային/արտթերապիայի շրջանակներում կազմակերպվել է թվով 182 հանդիպում (մասնակիցների թիվ՝ 55)՝ ուղղված անձնային աճին, կենսական ակտիվ ինքնորոշման խթանմանը, հոգեկան ոլորտների ակտիվացմանը, գիտելիքների ձեռքբերմանը: Իրականացվել են նաեւ անցած կենսափորձի վերարժեւորմանն ուղղված, արժեքային համակարգի քննարկմանը եւ խմբային արժեքների դուրսբերմանն ուղղված, խմբի սոցիալ-հոգեբանական մթնոլորտի բարելավմանն ու միախմբանն ուղղված տեխնիկաներ, ինչպես նաեւ իրականացվել է երաժշտաթերապիա, ուշադրության, հիշողության զարգացմանը նպաստող խաղեր, վերբալ եւ պատկերավոր մտածողությանը, ստեղծագործական երեւակայության հետազոտմանը եւ զարգացմանն ուղղված տեխնիկաներ, ինչպես նաև ինքնաճանաչման ուղղված պրոյեկտիվ մեթոդիկաներ:
  Բուժքրոջ կողմից ցերեկային կենտրոնում իրականացվել է թվով 55 շահառուի զարկերակային ճնշման չափում, 55 օքսիմետրիա, թվով 22 շահառուի ներարկում, ուղեկցում տարածքային պոլիկլինիկա 1, գլյուկոմետրիա 22: Հիգիենայի կանոնների վերահսկում, սննդի ստուգում և շաբաթական մեկօրյա գրաֆիկով առողջ ապրելակերպի վերաբերյալ դասընթացի կազմակերպում՝ «Առողջ ապրելակերպ», Վահանաձեւ գեղձ» թեմաներով քննարկումներ:

- Կենտրոնում գործել է շահառուների հետաքրքրություններին համապատասխանող 8 խմբակ՝
  - Գրական,
  - Երգի,
  - Կինեզալոգիայի,
  - Հմուտ ձեռքերի,

- Կարի,
- Հոգևոր զրույցների,
- Առողջ ապրելակերպի,
- Աշուղական խմբակ

Խմբակներին մասնակցել են 55 շահառու:
Կազմակերպվել է թվով 214 մշակութային միջոցառում, որոնց մասնակցել է 55 շահառու:

- Կենտրոնում սննդի տրամադրման շրջանակներում յուրաքանչյուր օր սննդային 2 ընդմիջում է կազմակերպվել:
- Թվով 17 շահառու օգտվել է բաղնիքի ծառայությունից:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրված նյութերի հղումները տեղադրված են եռամսյակային հաշվետվություններում

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչնդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

- ✓ «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի կողմից կազմակերպվել է «Ֆունկցիաների միջազգային դասակարգում ՖՄԴ կիրառման ճանապարհային քարտեզը» և 1744-Ն նոյեմբերի 10 որոշման մեջ կատարված փոփոխությունների մասին քննարկումներ, որին մասնակցել են «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի՝ Երեւանի բոլոր մասնաճյուղերի, սոցիալական աշխատողները և պատասխանատուները
- ✓ Առաքելություն Հայաստան ԲՀԿ-ի կողմից կազմակերպված «Տարեց և/կամ հաշմանդամություն ունեցող անձանց ծառայությունների տրամադրում», «Դեպքի վարման առանձնահատկությունները» թեմայով դասընթաց, մասնակցել են Նոր Նորք և Ավան համայնքները սպասարկող սոցիալական աշխատողները
- ✓ WHO, UN-DESA and INPEA –ի կողմից կազմակերպված «Տարեցների նկատմամբ վատ վերաբերմունք» թեմայով վեբինարի, սոցիալական աշխատանքի սուպերվիզոր Թ. Մնացականյան
- ✓ Շվեյցարիայի Լյուցերնի համալսարանի և Հայաստանի Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի միջև համագործակցության արդյունք է, որին օժանդակում են մի շարք գործընկերներ, այդ թվում ԱՀԿ եվրոպական և հայաստանյան գրասենյակները «Վերականգնողական ծառայությունների միջոցով առողջ ծերացման խթանումը Հայաստանում» առողջապահական համակարգի ուսուցման մոտեցման կիրառմամբ, սոցիալական աշխատանքի սուպերվիզոր Թ. Մնացականյանը

- ✓ ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի կողմից կազմակերպված «Տարեցների սոցիալական աջակցության ծառայությունների մեթոդաբանական ասպեկտները», «Հումանիտար և զարգացման համատեքստում տարեցներին աջակցելու լավագույն միջազգային փորձը», մասնակցել է Նոր Նորքի սոցիալական աշխատող Հ. Ադամյանը
- ✓ Ֆոկուս խումբ «ՖՄԴ-ի կոռուպցիոն ռիսկերը» մասնակցել են սոցիալական աշխատող Հ. Ադամյանը և սուպերվիզոր Թ Մնացականյանը
- ✓ Հոգեբանը անհատական նախաձեռնությամբ մասնակցել է
  - «*Հայկական հոգևոր վերականգնման*» հիմնադրամի կողմից կազմակերպված 18 ժամ տևողությամբ *«Նարատիվային թերապիա»* խորացված դասընթացին:
  - *«ԵՊՀ* կիրառական հոգեբանության կենտրոնում» կազմակերպված «Բրեյնսփոթինգ» միջազգային ինտենսիվ դասընթացին:
  - Երրորդ և չորրորդ եռամսյակների ընթացքում հոգեբանը անցել է անհատական սուպերվիզիա, խմբային սուպերվիզիա և բալինտյան խումբ:
- ✓ «Հումանիտար ականապատման փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ վերապատրաստում սերտիֆիկացում, մասնակցել է սոցիալական աշխատող Հասմիկ Ադամյանը:
- ✓ MHPSS վերապատրաստում «Action Against Hunger»-ի կողմից կազմակերպված վերապատրաստում, մասնակցել են սոցիալական աշխատող Հասմիկ Ադամյանը, սուպերվիզոր՝ Թամար Մնացականյանը
- ✓ UNHCR, «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ PM ծրագրի առաջին փուլի ամփոփում վերապատրաստում, մասնակցել են սոցիալական աշխատողներ Հասմիկ Ադամյան, Մարգո Աբաղյան
- ✓ Տարեցների պաշտպանության ցանցի հանդիպումներին մասնակցություն, սուպերվիզոր Թամարա Մնացականյան
- ✓ Միասնական սոցիալական ծառայության Նոր Նորքի և Ավանի տարածքային կենտրոնի համակարգող խորհրդի ամենասյա նիստին մասնակցություն, սուպերվիզոր Թամարա Մնացականյան:
- ✓ Թիմի բոլոր անդամները Աղվերանում մասնակցել են Կազմակերպության կողմից կազմակերպված թիմ բիլդինգին:
- ✓ Թիմ լիդերը, սոցիալական աշխատողները, բուժքույրերը, հոգեբանները մասնակցել են Շենգավիթի կենտրոնում կազմակերպված թրեյնինգին՝ ուղղված սթրեսի կառավարման մեխանիզմներին հետտրավմատիկ շրջանում՝ փախստականների հետ աշխատանքում:
- ✓ Հոգեբանի մասնակցությամբ ԵՊՀ կիրառական հոգեբանության կենտրոնում կայացած «Բրեյնսփոթիգ միջազգային ինտենսիվ» :
- ✓ Արաբկիր և Կենտրոն վարչական շրջանի տնային սպասարկման սոցիալական աշխատողները ամեն ամիս մասնակցել են ՄՍԾ խորհրդատվական նիստին:
- ✓ Տեղացի տարեցների և Արցախից բռնի տեղահանված տարեցների համար Ծաղկաձորի «Ռոսիա» հյուրանոցում կազմակերպված աշնանային ճամբարի բովանդակությունն ավելի օգտակար և արդյունավետ լինելու նպատակով բուժքրոջ կողմից իրականացվել է դասընթաց «Առողջ ափսե» խորագրով: Ճամբարի երկու փուլերին իրենց գեղեցիկ ելույթով հանդես եկան նաև ժող.գործիքների խումբը: Ճամբարի 2-րդ փուլին մասնկացել է նաև թիմի պատասխանատուն:
- ✓ «Նոնենի» համայանքային կենտրոնում աշխատողների համար կազմակերպվել է հերթական հոգեբանական թրեյնինգը՝ ուղղված միջանձնային փոհարաբերությունների բարելավմանը, կոնֆլիկտների հաղթահարմանը:
- ✓ Առողջապահական քաղաքականության և համակարգերի հետազոտություն (ԱՔՀՀ) Նոյեմբեր 1 և 2, 2024թ: Դասընթացավար՝ Դր. Դիմա Թուհամին հետդոկտորական հետազոտական՝ վերականգնողական և առողջ ծերացման գծով, ծրագրի համակարգող Լյուցեռնի համալսարանում, Շվեյցարիա: Մասնակցություն Նոր Նորք եւ Ավան Սուպերվիզորի կողմից:
- ✓ Տարեցների հիմնախնդիրներով զբաղվող միջգերատեսչական հանձնաժողովի նիստին մասնակցություն Նոր Նորք եւ Ավան Սուպերվիզորի կողմից:

- ✓ Տարեցների պաշտպանության ցանցի հանդիպումների շարունական մասնակցություն՝ Նոր Նորք եւ Ավան Սուպերվիզորի կողմից:
- ✓ Տարեցների առողջության և խնամքի ապահովման ասոցիացիան, Գերիատրիայի և գերոնտոլոգիայի հայկական ասոցիացիայի և Հայ օգնության ֆոնդի հետ միասին, «Գերիատրիա. համակողմանի մոտեցում հիվանդությունների կառավարմանը» խորագրով ամենամյա կոնֆերանսին մասնակցել են Նոնենի Յկ-ի բուժքույրերը եւ Նոր Նորք սուպերվիզորը:
- ✓ Պաշտպանության մոնիթորինգ է իրականցրել Նոր Նորք եւ Ավան  սպասարկող սոցիալական աշխատողների կողմից՝ Մարգո Աբաղյան, Հասմիկ Ադամյան:

Ձևաչափ

ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության ցերեկային խնամքի կենտրոնի շահառուներին մատուցված ծառայությունների վերաբերյալ

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 50/51 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 43 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 7 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 6 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 0 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 7 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 44 |
| 2. | մեկանգամյա սննդի տրամադրում | 55 |
| 3. | Կարիքի գնահատում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 55 |
| 4. | Աշխատանքային/արտթերապիայի որոշակի տեսակների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 55 |
| 5. | Խմբակների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 55 |
| 5.1 | Կինեզալոգիա | 40 |
| 5. 2 | Գրական | 45 |
| 5.3 | Երգի | 25 |
| 5.4 | Հոգևոր զրույցներ | 50 |
| 5.5 | Հմուտ ձեռքեր | 42 |
| 5.6 | Կարի | 4 |
| 5.7 | Աշուղական | 18 |
| 5.8 | Առողջ ապրելակերպի | 19 |
| 6. | Մշակութային միջոցառումների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 55 |
| 6.1 | Այդ թվում՝ կենտրոնից դուրս | 51 |
| 7. | Այլ ծառայություն (Բաղնիքից շարունակաբար օգտվել են) | 17 |

Կազմակերպության ղեկավար *Երվանդ Մխիթարյան* «10»01.2025թ.

(ստորագրություն, անուն,ազգանուն)